# Արձանագրություն N 2

## «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

31. 07. 2017թ.
ժամ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Տեր-Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարտիրոսյան (ԲԱ), Ա. Հայրապետյան (ԲԱ),

Վ. Մարգարյան (ԳԱ), Է. Հարոյան (ԳԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

**1. << ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3 >> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---

(Ա. Տեր-Թորոսյան)

1.1 << **ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3**>> ծածկագրով գնման ընթացակարգին առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | |
|---|---|
| 1 | «Շահար» ՍՊԸ |
| 2 | «Սասունսասար» ՍՊԸ |
| 3 | «Ռազովալր» ՍՊԸ |
| 4 | «Աֆալան» ՍՊԸ |
| 5 | «Գոռպլաստ» ՍՊԸ ի |
| 6 | «Վահրադյան Շին» ՍՊԸ |

**2.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

---

(Ա. Տեր-Թորոսյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկը.

| | Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | «Շահար» ՍՊԸ Առանց ԱԱՀ-ի | 19,800,000 |
| 2 | «Սասունսասար» ՍՊԸ | 27,600,000 |
| 3 | «Ռազովալր» ՍՊԸ Առանց ԱԱՀ-ի | 24,400,000 |
| 4 | «Աֆալան» ՍՊԸ | 30,000,000 |
| 5 | «Գոռպլաստ» ՍՊԸ Առանց ԱԱՀ-ի | 25,700,000 |
| 6 | «Վահրադյան Շին» ՍՊԸ | 32,280,000 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան անճշտություններ:

**3.Բացված հայտերում՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

---

(Ա. Տեր-Թորոսյան)

3.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

: Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**4.« ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

---

(Ա. Տեր-Թորոսյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

| **Մասնակցի անվանումը** | **Հայտի գնահատականը** |
|---|---|
| «Շահար» ՍՊԸ | Բավարար |
| «Սասունասար» ՍՊԸ | Բավարար |
| «Ռազովալր» ՍՊԸ | Բավարար |
| «Աֆալան» ՍՊԸ | Բավարար |
| «Գոռպլաստ» ՍՊԸ ի | Բավարար |
| «Վահրադյան Շին» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**5. << ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/3>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին**

---

(Ա. Տեր-Թորոսյան)

5.1 Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով

-- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Շահար» ՍՊԸ –ն,

-- 2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սասունասար» ՍՊԸ -ն:

5.2 Հանձնաժողովի քարտուղարին՝ Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

### 6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

---

(Ա. Տեր-Թորոսյան)

6.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման պատասխանը ստանալու և 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Ա. Տեր-Թորոսյան |
| Անդամներ՝ | | Ա. Մարտիրոսյան |
| | | Ա. Հայրապետյան |
| | | Վ. Մարգարյան |
| | | Է. Հարոյան |
| Քարտուղար՝ | | Գ. Հուրոյան |